



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



« 26 » 08 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0156 - 21

Ձեռնարկողը՝

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական փողոց 3

Գործունեությունը՝

Հյուսիս- Հարավ ճանապարհային միջանցքի
ներդրումային ծրագիր Տրանշ 2. Աշտարակ-Թալին
ճանապարհի կմ 29+600 – կմ 37+600
ճանապարհահատվածի կառուցման շրջակա միջավայրի
վրա ազդեցության գնահատման հաշվեքվություն
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 8 թերթ

թիվ ԲՓ 0156-21

<26> 08 2021թ.

Հյուսիս- Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային
ծրագիր Տրանշ 2. Աշտարակ-Թալին ճանապարհի կմ 29+600 – կմ
37+600 ճանապարհահատվածի կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝
Փաստաթղթի տեսակը՝

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման / ՇՄԱԳ/ հաշվետվություն,
նախագծային փաստաթղթեր
/Ա կատեգորիա/
Արագածոտնի մարզ

Գործունեության կատեգորիան
Տեղադրման վայրը՝

Ներածական մաս: Արագածոտնի մարզի տարածքում Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի՝ Տրանշ 2 ճանապարհահատվածի կառուցումը և շահագործումը համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի 10)-րդ կետի գ. Ենթակետի դասակարգվում է որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Ներկայացվող գործունեությունը իրականացվելու է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» շրջանակներում: «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր» Տրանշ 2-ի Մ1 Երևան-Գյումրի-Բավրա մայրուղին իրենից ներկայացնում է 100կմ/Ժ հաշվարկային արագությամբ արագընթաց ճանապարհ: Տրանշ 2 ճանապարհի ծրագիծը սկիզբ է առնում 29+600 կմ-ից՝ Աշտարակում և ավարտվում է 71+500 կմ վրա՝ Թալինում և ամբողջությամբ գտնվում է Արագածոտնի մարզի տարածքում: Ճանապարհաշինական ծրագրերը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը կազմակերպում է «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի միջոցով: Ծրագրի իրականացումը ֆինանսավորվել է Ասիական զարգացման բանկի կողմից տրամադրվող վարկով: Սույն նախագծով նախատեսված ճանապարհի փոփոխվող հատվածի տարածքների շինարարական աշխատանքների համար ազդակիր են հանդիսանում Արագածոտնի մարզի՝ Ագարակ, Աղծք և Ոսկեվազ համայնքները:

Նկարագրական մաս: Տրանշ 2. Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի /որն ուներ շուրջ 42կմ երկարություն/ աշխատանքային նախագծի ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 2011 թվականի հուլիսի 22-ին տրվել է թիվ ԲՓ-65 դրական փորձաքննական եզրակացություն: Աշխատանքների իրականացման ընթացքում բացահայտվել է, որ «Ագարակի հնագիտական համալիրը» շինարարության արդյունքում կարող է ենթարկվել հնարավոր ազդեցության և հնագիտական համալիրի պահպանության և անվտանգության ապահովման նպատակով իրականացվել են դաշտային հետազոտություններ և հնագիտական պեղումներ: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Շրագորի

ազդեցության տակ են ընկնում հնագիտական տեսակետից արժեքավոր հնավայրեր, որոնցից առանձնացվել է «Ագարակի պատմամշակութային արգելոցը», ինչն էլ պատճառ է հանդիսացել 8 կմ երկարությամբ ճանապարհի հատվածի նախագծի վերանայման և ուղեգծի փոփոխության համար: «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ կողմից 2018 թվականին մշակվել է նախագծի փոփոխություն /որի հիմնական նպատակը եղել է Ագարակի հնագիտական համալիրի շրջանցումը/ որի ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 2019 թվականի փետրվարի 14-ին տրվել է թիվ ԲՓ- 06 դրական փորձաքննական եզրակացություն:

Ներկայացված Տրանշ 2. Աշտարակ-Թալին ճանապարհի 8 կմ հատվածի տեղափոխումը թույլ կտա շրջանցել տեղանքում առկա հնագիտական վայրերը: Նոր մայրուղու առաջարկված նախագիծն անցնելու է պեղված վայրերով: Մայրուղու փոփոխված ծրագիծը քննարկվել և համաձայնեցվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատուների հետ, որի արդյունքում ստացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեխնիկալ Տ.Գալստյանի №03/14.2/3781-18 առ 25.06.2018թ. նամակը (կցվում է հավելվածների մասին) այն մասին, որ նախարարությունը չի առարկում փոփոխված ծրագծի վերաբերյալ ներկայացված առաջարկին:

Նախագծով նախատեսում է Տրանշ 2. Աշտարակ-Թալին ճանապարհի (ԿՄ 29+600-ԿՄ 37+600) 8 կմ տեղափոխված ճանապարհահատվածի բետոնե ծածկը փոխարինել ասֆալտե ծածկով: Նախագծված ճանապարհն անցնում է չոր տափաստանային և տափաստանային լանդշաֆտային գոտիներով: Ծրագրի տարածաշրջանում հողերի մեծ մասը ներառված է գյուղատնտեսական շրջանառության մեջ և պահպանվել են վայրի բնության միայն փոքր կղզյակներ: Փոփոխված ծրագծի տեղանքում կաարվել է լրացուցիչ հետազոտություններ և դաշտային աշխատանքներ, համաձայն դրանց հաշվետվությունների արդյունքների՝ անմիջապես նախատեսվող գործունեության տարածքում առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում կամ ԲՊՄՄ կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները բացակայում են: Հայցվող տարածքում իրականացված դաշտային ուսումնասիրությունների ժամանակ, տարածքում կենդանիների ցամաքային միգրացիոն ուղիներ ևս չեն հայտնաբերվել: Նախագծված ճանապարհահատվածի երկայնքով և հարակից տարածքներում չկան ԲՀՊՏ-ներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ գրանցված բնության հուշարձաններ:

Շրջանցող ճանապարհի ծրագծում աղմուկի ֆոնային մակարդակը որոշելու համար 2018 թ. օգոստոս ամսին կատարվել են չափումներ, որոնց արդյունքների համաձայն՝ բոլոր համայնքներում ճանապարհից 20մ հեռավորության վրա փաստացի աղմուկի մակարդակը գերազանցում է սահմանային թույլատրելի մակարդակը:

«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարվել են SO₂-ի և NO₂-ի նմուշառումներ և ուսումնասիրություններ, համաձայն արդյունքների՝ աղտոտիչների օրական միջին կոնցենտրացիաները էականորեն ցածր են ՍԹ-ներից:

Ճանապարհը նախագծվել է ըստ հետևյալ չափորոշիչների՝ բարելավված ճանապարհային ցուցանակներ, նշաններ, անվտանգություն, ջրահեռացման համակարգեր, վաքեր, կողնակներ և ճանապարհային հանգույցներ: Գոյություն ունեցող հողային պատահողի որոշ հատվածներ, որոնք կառուցվել են շուրջ 30 տարի առաջ:



կառուցվածքային առումով չեն համապատասխանում տեխնիկական պահանջներին, շարքից դուրս են եկել, և, հետևաբար, վերակառուցվելու են և արդյունքում կձևավորվի նոր չորս գոտիանոց ավտոմայրուղի՝ բաժանիչ գոտիով: Նախագծումը ներառում է երթևեկելի մասերի բաժանիչ գոտիի և կողնակների բարեկարգում: Կանաչապատման առավելությունները/օգուտները ներառում են էկոլոգիական արժեքի բարձրացում, տեղանքի բարեկարգում՝ էսթետիկ տեսանկյունից, ինչպես նաև՝ աղմուկի որոշակի խլացում: Ճանապարհի նախագիծը ներառում է համայնքներին հասու դարձնել արդեն գոյություն ունեցող ճանապարհը, ինչպես նաև նոր մայրուղուց երկու ուղղությամբ ստեղծել օգտվելու հնարավորություն: Անհրաժեշտության պարագայում ստեղծել գետնանցումներ՝ հետիոտնի, եղջերավոր անասունների, գյուղատնտեսական և անձնական փոխադրամիջոցների, վայրի կենդանիների համար:

Փոփոխված ծրագիծն անցնում է Ոսկեվազ, Ագարակ և Աղծք համայնքներով: Նոր ծրագիծը կսկսվի 29+934 կմ-ից և ավարտվելու է 36+200 կմ-ում (նախկինում՝ 32+600 կմ-ի փոխարեն): Ճանապարհն ունի 4 երթևեկելի գոտի: Երկայնական առավելագույն թեքությունը 5% է, հորիզոնական կորերի նվազագույն շառավիղը 1000 մ է: Տրանշ-2 Աշտարակ-Թալին Ագարակ համայնքի մոտ 8 կմ հատվածի ճանապարհի ցեմենտբետոնե պատվածքը նախատեսված է փոխարինել ասֆալտբետոնե պատվածքով: Փոփոխված նախագծով նախատեսված 26.6 մ լայնությամբ հողային պաստառից ասֆալտե ծածկը կազմում է 21.4 մ: Ծրագիծն հատող բոլոր կոմունիկացիաների համար նախատեսվել է տեղափոխում: Նոր նախագծվող ճանապարհի կմ 31+967-ում առկա է մեկ տրանսպորտային հանգույց: Նախագծով նախատեսված է 2 հատ ուղեանց, որոնք երկաթբետոնյա են, ունեն երկու թռիչք՝ 18 մ երկարությամբ: Ուղեանցների երկարությունը միասին կազմում է 72մ: Գյուղատնտեսական աշխատանքներին ապահովելու համար նախատեսվում է կառուցել գյուղտեխնիկայի անցումներ և անասնաանցեր:

Փոփոխված ծրագծի երկայնքով նախատեսված են.

- 4 հատ 6 x 4.5 մ բացվածքով գյուղտեխնիկայի անցում,
- 2 հատ 2x18մ թռիչքներով ստորգետնյա գյուղտեխնիկայի անցում,
- 1 հատ 5x3.0մ բացվացքով անասնաանցում
- ճանապարհային հանգույց 1 հատ տեաձև հատումով և 1հատ 2x18մ թռիչքներով էստակադայով:

Փոքր ձորակներում անձրևաջրերի և ձնհալքների, ինչպես նաև երթևեկելի մասի ջրահեռացումը ապահովելու համար ճանապարհի երկայնքով նախատեսված են մոտ 40 խողովակներ: Բոլոր արհեստական կառուցվածքները նախագծված են միջազգային նորմերին համապատասխան:

Շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական տեխնիկական միջոցներն են՝ 3 հատ բուլդոզեր, 3 հատ էքսկավատոր, 10 հատ բեռնատար ինքնաթափ մեքենաներ, 3 հատ գլղոն այլ օժանդակ տեխնիկական միջոցներ:

Ասֆալտապատման համար օգտագործվելու են.

- մանր հատիկավոր ասֆալտային խառնուրդ՝ 162 մ³,
- խոշոր հատիկավոր ասֆալտային խառնուրդ՝ 185 մ³,
- խճային խառնուրդ՝ 115 մ³:

Ընդամենը՝ 462 մ³:

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կկազմի 2 տարի: Հողային աշխատանքների արդյունքում հանվող հողագրունտի ծավալը կկազմի



1230943մ³, որից 873772մ³ ծավալն օգտագործվելու է որպես հետլիցք, մնացորդային՝ 357171 մ³ ծավալն ամբողջությամբ օգտագործվելու է ճանապարհի ներքին և եզրային շերտերի ձևավորման համար: Շինարարության ընթացքում գրունտի տեղափոխում, հեռացում կամ այլ վայրից ներկրում շինարարության համար չի նախատեսվում: Նախագծված ճանապարհի շինարարության ենթակա տեղանքը հիմնականում քարքարոտ է՝ զուրկ բերրի հողաշերտից, կամ հողաշերտին հզորությունը տատանվում է 5 – 8 սմ սահմաններում, որի հանումը և պահեստավորումը գործնականում անհնարին է: Սակայն նախկինում մշակված 5 տեղամասերում, որտեղ առկա է մինչև 25 սմ հզորության հողաշերտ, 21133 մ³ ծավալով այն կհանվի և կպահեստավորվի հատուկ միջոցառումներով:

ՇՄԱԳ հաշվետվությունում գնահատվել է ծրագրի իրականացման արդյունքում /նախագծում, շինարարության և շահագործման փուլեր/ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, որոնք կարող են կրել ժամանակավոր բնույթ: Շինարարական աշխատանքների ազդեցությունը մթնոլորտային օդի, ջրային և հողային ռեսուրսների, կենսաբազմազանության վրա պայմանավորված կլինեն ծխագազերի, փոշու, աղմուկի մնացորդային գրունտի առաջացմամբ, յուղի և վառելանյութի արտահոսքերով, պինդ և հեղուկ թափոնների առաջացմամբ, շինհրապարակի տեղադրմամբ և այլ ազդեցություններով:

Գործունեության ազդեցության ենթակա տարածքներում բացահայտվել են Ծրագրի ազդեցությունները (բացասական և դրական) ֆիզիկական, էկոլոգիական, հնագիտական և սոցիալ-մշակութային և տնտեսական ռեսուրսների վրա, ներառյալ՝ աշխատողների և ճանապարհի մոտակա համայնքների բնակչության առողջությունն ու անվտանգությունը: Մեղմացնող միջոցառումները առաջարկվել են՝ սկսած նախագծումից, շինարարությանը նախորդող և ընթացիկ փուլերից, մինչև շահագործման և պահպանման ժամանակահատվածը: Բոլոր մեղմացնող միջոցառումները ներկայացվել են ԲԿԴ-ում (Բնապահպանական կառավարման պլան):

Նախապատրաստական աշխատանքները նախատեսում են շին. ճամբարների պլանավորումը, դրանց էլեկտրաէներգիայով, ջրով, սանհանգույցներով ապահովումը, թափոնների կառավարման, շին. նյութերի պահեստավորման, հնարավոր արտակարգ իրավիճակների կառավարման միջոցառումների ապահովումը, ինչպես նաև օրենքով սահմանված բոլոր անհրաժեշտ թույլտվությունների, հավաստագրերի ձեռքբերումը:

Շինարարական աշխատանքների ընթացքում մթնոլորտային օդն աղտոտող հիմնական արտանետումներն առաջանում են հողային աշխատանքներից՝ փոշու արտանետումների ձևով /որի քանակը շին/ժամանակահատվածի համար կկազմի 29.5 տ/ և շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործումից՝ դիզելային վառելիքի այրման արդյունքում և ասֆալտապատման աշխատանքներից: Ասֆալտապատման աշխատանքների համար օգտագործվող խառնուրդը, որը պարունակում է հալեցրած բիտում, կհանդիսանա ածխաջրածինների առաջացման աղբյուր:

Շինարարության փուլի համար ըստ շահագործվող տեխնիկայի տեսակների հաշվարկվել են վնասակար նյութերի արտանետումների ընդհանուր քանակները, որոնց արդյունքները կազմում են՝ անօրգանական փոշի՝ 29.5տ, ածխածնի մոնօքսիդ՝ 19.6տ, ածխաջրածիններ՝ 5.608տ, ազոտի օքսիդներ (հաշվարկված որպես ազոտի երկօքսիդ)՝ 22.8տ, պինդ մասնիկներ՝ 2.3տ, ծծմբի երկօքսիդ՝ 2.15տ են ստորև /ազոտի օքսիդներ և



տեսակները ներկայացված են ՇՄԱԳ հավելվածներում/, որից 211 -ը մշակվող՝ այգեգործական են: Կտրված ծառերը հնարավոր դեպքերում պետք է վերատնկվեն, կամ փոխարինվեն նոր ծառերով և թփերով՝ 1:10 հարաբերակցությամբ: Ծառերի տնկման ծախսերը 1 հա տարածքի վրա /թվով 1500 – 2000 տնկի/ նախնական գնահատվել է 9.16 մլն. ՀՀ դրամ: Կապալառուն պետք է ապահովի տնկված բուսականության պահպանությունը և շինարարական աշխատանքներից հետո վարձի մասնագիտացված կազմակերպություններ՝ ծառերի և թփերի խնամելու համար:

Մինչև շինարարական աշխատանքների ավարտը և շինհրապարկը Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը հանձնելը, Կապալառուն պետք է վերականգնի շինհրապարակը՝ մաքրելով այն շինարարական նյութերից, թափոններից և վերականգնի պահեստավորված հողաբուսաշերտով:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների կանխարգելման, կամ մեղմացման նպատակով նախատեսված միջոցառումները /ներառյալ՝ գործունեության ենթակա տարածքում աշխատանքային միջավայրի անվտանգության, սանիտարական պայմանների ապահովման և հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված միջոցառումները/ ամփոփվել են բնապահպանական կառավարմաման պլանում: Յուրաքանչյուր շինհրապարակի համար Կապալառուի կողմից կմշակի տվյալ աշխատանքային տեղամասին հատուկ ԲԿՊ, որը կներառի բնապահպանական միջոցառումները:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են տեղական ինքնակառավարման մարմինները, Արագածոտնի մարզպետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության, ԿԳՄՍ և ՏԿԵ նախարարությունները, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում:

Նախնական գնահատմամբ հայտնաբերվել են անուղղակի ազդեցություն կրող հնագիտական պեղումնավայրեր: ՀՀ ԿԳՄՍ նախարարության մասնագետների հետ համատեղ իրականացված քննարկումների արդյունքում պարզվել է, որ նոր ծրագծի երկայնքով առկա են մի քանի փոքր տեղամասեր, որտեղ անհրաժեշտություն կա կատարել փոքրածավալ պեղումներ: Նշված աշխատանքները կկազմակերպվեն ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան և չեն խոչընդոտի ճանապարհահատվածի շինարարության աշխատանքներին:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության փուլում ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ Ագարակ համայնքում անցկացված հանրային քննարկման ընթացքում /որին մասնակցել են Ագարակ, Աղծք և Ոսկեվազ համայնքների ղեկավարները/ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Քննարկման ընթացքում հարց է բարձրացվել նախագծված ճանապարհի հատվածում ոռոգման ենթակառուցվածքների առկայության վերաբերյալ: Ձեռնարկող կազմակերպության աշխատակիցը հավաստեց, որ շինարարական աշխատանքները չեն կարող խոչնդոտել ոռոգման աշխատանքներին, քանի որ նախագծում հաշվի է առնվել:



Ամփոփելով վերոնշյալը պետք է փաստել, որ շինարարական աշխատանքների ընթացքում համայնքների բնակչության վրա բացասական ազդեցությունները /որոնք ներառում են՝ փոշու արտանետումներ, աղմուկի առաջացում, ճանապարհների անհասանելիություն և այլն/ կլինեն կարճաժամկետ և էականորեն կարող են մեղմացվել ԲԿՊ-ում ներառված հատուկ միջոցառումների իրականացման շնորհիվ: Սակայն Ծրագիրը տեղի համայնքների համար կունենա նաև դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն: Տրանշ 2 ճանապարհահատվածի կառուցումը կխթանի տարածաշրջանային տնտեսական զարգացմանը, քանի որ երկրի հարավը կկապի հյուսիսի հետ, միաժամանակ դրա հետ կապված կստեղծվեն սպասարկող կազմակերպություններ և նոր աշխատատեղեր:

Փորձաքննական պահանջներ

1. Գործունեությունն իրականացնելիս ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ է ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները (ներառյալ ջրօգտագործումը, ջրահեռացումը, հողերի գործառնական նշանակության փոփոխությունը և այլն):

2. Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝ ՀՀ կառավարության՝ 14.08.2008թ. N 967-Ն, 29.01.2010թ. ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին>> N71-Ն և N72-Ն և 31.07.2014թ. N781-Ն որոշումների պահանջներով:

3. Ծրագրի երկայնքով չնախատեսված տեղում հնագիտական գտածոների հայտնաբերման դեպքում պահպանության խնդիրներն ու մեթոդներն (ուսումնասիրություն, պեղում, ծրագրի համար այլընտրանքների դիտարկում) անհրաժեշտ է իրականացնել ՀՀ մշակույթի նախարարության գործառույթներին և սահմանված ընթացակարգին համապատասխան: Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին»:

4. Մինչև գործունեության իրականացումն ազդակիր համայնքների ղեկավարներից ստանալ համապատասխան համաձայնեցումներ՝ շինարարական հրապարակների տեղադրման, բուսաշերտի ժամանակավոր պահեստավորման, շինարարական աղբի և թափոնների հեռացման վայրերի վերաբերյալ:

5. Ծառերի և թփերի տնկման, կամ վերատնկման աշխատանքները և դրանց վայրերն անհրաժեշտ է համաձայնեցվեն համայնքների ղեկավարների և համապատասխան մասնագետների հետ:

6. Մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը՝ շինարարական կազմակերպության և ազդակիր համայնքների հետ ճշտել ոռոգման ենթակառուցվածքների /ջրթողեր, ոռոգման խողովակներ/ տեղադիրքերը, անհրաժեշտության դեպքում ձեռնարկել համապատասխան տեխնիկական լուծումներ:



7. Ճանապարհի շինարարության ընթացքում՝ նոր հանքավայրերի շահագործման անհրաժեշտության դեպքում, գործընթացն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Շինարարության ընթացքում անհրաժեշտ է ապահովել ԲԿՊ-ում և բնապահպանական մոնիթորինգի պլանում առաջարկվող միջոցառումների և մոնիթորինգային դիտարկումների իրականացումը և ժամանակացույցերը, որոնց արդյունքները պետք է հասանելի լինեն պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր՝ Տրանշ 2. Աշտարակ-Թալին ճանապարհի կմ 29+600 – կմ 37+600 ճանապարհահատվածի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝



Հ. Մկրտչյան